ՈՐՈՇՈՒՄ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի

գիտական խորհրդի 2016 թ. մարտի 30-ի նիստի

(արձանագրություն № 10)

Ղեկավարվելով համալսարանի կանոնադրության 36-րդ կետի 2-րդ, 4-րդ և 7-րդ ենթակետերով և լսելով ու քննարկելով համալսարանի նախապատրաստական բաժնի գործունեության կանոնակարգի, 2016-2017 ուսումնական տարվա մասնագիտությունների ուսման վարձերի և ուսումնական պլանի վերաբերյալ հարցերը (զեկուցող՝ պրոռեկտոր Միեր Մելիք-Բախշյան)՝

Գիտական խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի նախապատրաստական բաժնի
   ա) գործունեության նոր կանոնակարգը,
   բ) 2016-2017 ուսումնական տարվա երկարաժամկետ (ութամսյա) և արագացված (եռամսյա) դասընթացների ուսման վարձերը (հավելված 1 և 2),
   գ) 2016-2017 ուստարվա նախապատրաստական դասընթացների ուսումնական պլանը:

2. Ուժը կորցրած ճանաչել գիտական խորհրդի՝
   ա) 2014 թ. հոկտեմբերի 29-ի նիստում հաստատված Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի նախապատրաստական բաժնի գործունեության կանոնակարգը:
   բ) 2015 թ. օգոստոսի 27-ի նիստում հաստատված Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի նախապատրաստական դասընթացների 2015-2016 ուսումնական տարվա մասնագիտությունների ուսման վարձերը:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռուբեն Միրզախանյան